

Մեկնարկել է «ԱՐԻԱԼ» լազերային բարձր հաճախականային գիտահետազոտական գծային արագացուցչի կառուցման աշխատանքները

Կառավարության մամուլի կենտրոնում այսօր լրագրողների հետ է հանդիպել Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը, ով ներկայացրել է Միջազգային գիտական և գիտատեխնիկական ոլորտում 2011 թ. : Հիմնական ձեռքբերումները:

Նա մասնավորապես նշել է, որ «Քենդլ» նախագծի շրջանակում մեկնարկել են «ԱՐԻԱԼ» լազերային բարձր հաճախականային գիտահետազոտական գծային արագացուցչի կառուցման աշխատանքները, որը նախատեսվում շահագործման հանձնել 2013 թվականի գարնանը: Այս մասին այսօր հրավիրված ասուլիսում տեղեկացրեց Հայաստանի կրթության եւ գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը ավելացնելով, որ արագացուցչի կառուցման աշխատանքներն ընթանում են գերմանական «Դեզի» ընկերության հետ համագործակցության միջոցով, որը հայկական կողմին անհատույց տրամադրել է 3 մլն եվրո արժողությամբ գերժամանակակից սարքավորումներ: Սամվել Հարությունյանի խոսքով Քենդլ նախագծի շրջանակում համագործակցության պայմանավորվածություն է ձեռք բերվել նաև Շվեյցարիայի Պաուլ Շերերի անվան ինստիտուտի հետ:

Գերմանական եւ շվեյցարական կողմերի հետ ձեռք բերված պայմանավորվածությունների արդյունքում առաջիկա 2-3 տարիների ընթացքում կկազմակերպվեն երիտասարդ մասնագետների վերապատրաստման ծրագրեր վերը նշված գիտական կենտրոններում:

«Արագացուցչի կառուցումից հետո, համոզված եմ կունենանք թոյլատրելի գարգացում գիտության ասպարեզում: Դրան կնպաստեն նաև մի շարք այլ պետությունների՝ Ֆրանսիայի, Ուկրաինայի, Ռուսաստանի, Իտալիայի եւ այլ երկրների գիտահետազոտական կենտրոնների հետ ձեռք բերված համագործակցության պայմանավորվածությունները», - ասել է Սամվել Հարությունյանը:

Այս տարի միջազգային համագործակցության արդյունքում համաֆինանսավորման սկզբունքով կազմակերպվել եւ իրականացվել են գիտական ծրագրերի մրցույթներ հիմնարար հետազոտությունների բելառուսական հանրապետական հիմնադրամի, Ֆրանսիայի գիտական հետազոտությունների ազգային կենտրոնի, ռուսաստանյան հումանիտար գիտությունների հիմնադրամի հետ: Այս պահին ամփոփված են Բելառուսի հետ անցկացված մրցույթի արդյունքները, ինչի արդյունքում ֆինանսավորման են երաշխավորվել համատեղ 17 գիտական ծրագրեր:

Հետագայում նախատեսվում են մրցույթներ Գերմանիայի, Իտալիայի, Շվեյցարիայի հետ այդ թվում ինովացիոն ծրագրեր ֆինանսավորելու համար:

Սամվել Հարությունյանի գնահատականներով 2012 թվականին Հայաստանի պետական բյուջեից գիտությանն ուղղվող միջոցներն այս տարվա համեմատ կավելանան 7 տոկոսով եւ կկազմեն 10,3 մլրդ դրամ: Այդ միջոցներն հիմնականում ուղղվելու են ոլորտի աշխատողների աշխատավարձերի բարձրացմանը և միջազգային համագործակցության խթանմանը: «Գիտության վրա ծախսված յուրաքանչյուր մեկ դոլարը վերադարձնում է երկու դոլար: Գումարներ կներդրվեն նաև ինովացիոն բնույթի ծրագրեր ֆինանսավորելու համար», – նշել է Հայաստանի կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահը:

Սամվել Հարությունյանի խոսքով՝ պետությունն այսօր մեր երկրում ֆինանսավորում է գիտության զարգացման 70–75 տոկոսը նախորդ տարվա 85 տոկոսի դիմաց, իսկ մյուս մասը կազմում են մասնավոր ներդրումները: «Որքան պետությունը շատ է մասնակցում գիտության զարգացմանը, այնքան պետության զարգացման տեմպերը դանդաղում են: Օրինակ՝ Ֆինլանդիայում կառավարությունը գիտության զարգացման 7 տոկոսն է ֆինանսավորում, հիմնական մասը ֆինանսավորվում է մասնավորների կողմից»– ընդգծել է Սամվել Հարությունյանը կարևորելով մասնավոր ներդրումների ավելացումը գիտության ասպարեզում:

Ըստ նրա՝ գիտության զարգացման նպատակով իրականացվում են նաև դրամաշնորհային ծրագրեր: Գիտական ծրագրերի 35 տոկոսը ղեկավարում են մինչև 35 տարեկան երիտասարդ գիտնականները, որոնց թիվը, Սամվել Հարությունյանի խոսքով, բավականին շատ է և որոնց հետ գիտական ասպարեզում մեծ հույսեր են կապում:

"РЕАЛИЗАЦИЯ CANDLE ОБЕСПЕЧИТ ПРОРЫВ В ОТЕЧЕСТВЕННОЙ НАУКЕ", - считает председатель Госкомитета по науке РА Самвел АРУТЮНЯН



CANDLE - шаг в будущее

Свою вчерашнюю встречу с журналистами председатель Государственного комитета по науке РА Самвел Арутюнян начал с новостей в деле реализации программы CANDLE. Напомним, что в конце 2008 года правительство объявило разработанный армянскими учеными проект источника синхротронного излучения 3-го поколения CANDLE научным приоритетом номер один.

"ЗА ИСТЕКШИЕ 3 ГОДА ГОСКОМИТЕТ ПО НАУКЕ КАК СТРУКТУРА, координирующая программу CANDLE, подписал ряд важных договоров с Россией, Францией, Италией, Швейцарией и Германией, - сказал С.Арутюнян. - В рамках этих договоров уже есть подвижки в деле строительства линейного ускорителя. Это первый этап общей программы, на реализацию которого, в частности, Германия предоставила оборудования на сумму около 3 млн евро. До конца года ожидаются поступления в размере еще 1 млн евро, опять же в виде оборудования от Германии и Швейцарии. Работы по созданию линейного ускорителя уже начались. Работы в части бетонирования закончены, осталось завершить капитальное строительство, и с января следующего года начнем работать с оборудованием", - сообщил С.Арутюнян.

Планируется, что до конца 2012г. линейный ускоритель будет практически готов. Строительство же "кольца" начнется в будущем году и продлится около 4 лет. Какие же ожидания у Госкомитета на ближайшее будущее?

"Во-первых, это финансовые поступления, - отметил в беседе с корр. "ГА" С.Арутюнян. - Будут подписаны и новые договоры. В ходе визита нашего президента в Россию намечено подписание двусторонних договоров в области культуры, науки и образования. Надеюсь, CANDLE не будет обойден вниманием. Недавно были проведены переговоры с Францией на уровне президентов двух стран. О CANDLE речь не шла, но надеемся, что, когда французские делегации придут в Армению для обсуждения подписанных договоров, CANDLE будет включен в повестку дня. Ожидается серьезное участие Германии в этой программе. На уровне министров образования и науки и научных центров Госкомитетом по науке РА все вопросы решены, теперь дело за переговорами на уровне премьер-министров. Надеюсь, участниками программы станут Россия, Франция, Швейцария..."

Что касается участия России в программе CANDLE, то, согласно протоколу, подписанному Госкомитетом по науке РА и РИЦ "Курчатовский институт", "Курчатовский институт" считает участие России в проекте CANDLE делом исключительной важности. Если же учесть огромный авторитет руководителя Курчатовского института Михаила Ковальчука и тот факт,

что он является ученым секретарем совета при президенте РФ по науке, технологиям и образованию, то, возможно, именно его голос будет иметь решающее значение.

Не исключено и участие Китая в программе CANDLE, общая стоимость которой составляет порядка 60 миллионов евро. Правда, в реальности, возможно, потребуется несколько большая сумма. Армения вкладывает 25% всей суммы плюс выделяет землю и обеспечивает научно-технический потенциал. Ожидается решение правительства РА относительно выделяемой под реализацию проекта земли в районе г.Абовяна.



Каким же образом CANDLE способен обеспечить прорыв в отечественной науке? "Синхротронный ускоритель 3-го поколения - это сверхсовременное оборудование, позволяющее проводить самые передовые исследования, - отметил С.Арутюнян. - Несомненно, мы сможем обеспечить серьезный прорыв в области структурной биологии, фармакологии, археологии, материаловедения, причем речь идет об исследованиях на мировом уровне с привлечением солидных зарубежных партнеров.

С кадрами проблем не будет - у нас уже есть договоренности с зарубежными ускорительными центрами о подготовке наших молодых специалистов, в частности, с центрами синхротронного излучения DIAMOND в Великобритании и Деши в Германии. Уже сегодня наши ребята там работают и добились больших успехов. Вернутся ли они? Нисколько в этом не сомневаюсь. Ведь CANDLE ждет большое будущее, это будет международный центр с адекватной зарплатой специалистов".

ЕрФИ: реалии и перспективы

"Как я отношусь к возмущению, озвученному сотрудниками ЕрФИ? Философски отношусь, - сказал в беседе с корр. "ГА" С.Арутюнян. - Понимаете, сейчас, когда Институт физики из государственного учреждения стал фондом, сотрудники боятся того, что некоторые высокопоставленные чиновники просто продадут землю ЕрФИ и институт закроется.

Но этого не произойдет. Уверен, что перемены не отразятся и на работе станции космических лучей на Арагаце. Что же касается изменения статуса института, то уверен, что формат фонда для ЕрФИ более выгоден, чем статус государственной некоммерческой организации".

ПО СЛОВАМ С.АРУТЮНЯНА, НИКАКИХ СОКРАЩЕНИЙ В ЕрФИ НЕ БУДЕТ. Более того, финансирование института увеличено вдвое - если в прошлом году бюджет составлял порядка 370 млн драмов, то сегодня он составляет 670 млн драмов.

"Зарплата сотрудников выросла почти в 2 раза, - заключил С.Арутюнян. - ЕрФИ - элитарный институт, где зарплата вдвое выше, чем в академических институтах".

Надо растить специалистов-гуманитариев

В российско-армянском конкурсе на получение грантов в сфере гуманитарных наук с армянской стороны было подано всего 7 заявок. Почему так мало?

"ДУМАЮ, ПРОБЛЕМА В УРОВНЕ СПЕЦИАЛИСТОВ, - считает С.Арутюнян. - Имеют значение такие факторы, как неудовлетворительное знание иностранных языков. Ученые-арменоведы публикуют свои работы только в армянских изданиях. К сожалению, уровень научных работ в гуманитарной сфере значительно ниже, чем в области естественных наук. Многие просто не рискуют участвовать в совместных программах. Ведь если речь идет о российско-армянском конкурсе, то понятно, что все работы получают соответствующие оценки как в Армении, так и в России. Семь заявок - это действительно очень мало..."

Очевидно, что сфера гуманитарных наук нуждается в повышенном внимании, особенно если учесть фактор информационной войны, в условиях которой история, скажем, или арменоведение никак не могут оставаться "чистой наукой".

Ситуация в гуманитарной сфере требует времени и соответствующей государственной политики, считает С.Арутюнян. В ближайшее время правительству РА будет представлена программа развития арменоведения на 5 лет. Нужно готовить молодых арменоведов нового поколения.

Отметим, что бюджет на науку в Армении в 2012г. будет увеличен на 7% и составит 10,3 млрд драмов. Это 1% от расходной части бюджета и около 0,24% от ВВП. По-прежнему негусто...

Зара ГЕВОРКЯН

Մեծ թռիչք՝ արագացուցչի կառուցումով



Երիտասարդները պետք է մնան ու աշխատեն Հայաստանում

Թռիչքային զարգացում ենք ունենալու: Այս մասին երեկ հրավիրված ասուլիսի ժամանակ հայտարարեց ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը: Խոսքը գիտության ոլորտի առաջընթացի մասին է, որին ակնհայտ է կլինենք արագացուցչի կառուցումից եւ գործարկումից հետո: Հայաստանում «Քենդլ» նախագծի շրջանակում AREAL լազերային բարձր հաճախականության գիտահետազոտական գծային արագացուցչի կառուցման աշխատանքներն արդեն մեկնարկել են: Այն նախատեսվում է շահագործման հանձնել 2013 թ. գարնանը: Հիշեցնենք, որ 2008թ. ՀՀ կառավարության որոշմամբ «Քենդլ»-ին տրվեց գիտության եւ առաջատար տեխնոլոգիաների ոլորտում ռազմավարական ազգային գերակայության կարգավիճակ:

Արագացուցչի կառուցման աշխատանքներն ընթանում են գերմանական «Դեզի» ընկերության հետ համագործակցության միջոցով: «Դեզի» ընկերությունն արդեն տրամադրել է 3 մլն եվրո արժողությամբ գերժամանակակից սարքավորումներ: Հայկական արագացուցչիչը «Դեզի» արագացուցչի կրկնօրինակն է: «Քենդլ» ծրագրի շրջանակներում միջազգային լայն համագործակցություն է իրականացվում: Այս տարի էլ փոխըմբռնման հուշագիր է ստորագրվել ՀՀ-ի եւ Իտալիայի ELETTRA սինքրոտրոնային կենտրոնի ներկայացուցիչների միջեւ, սրան զուգահեռ էլ նախաձեռնվել է իրականացվել են մի շարք միջազգային հանդիպումներ, որոնց ժամանակ քննարկումներ են եղել եւ համագործակցության եզրեր են գտել:

«Ծրագրի արժեքը գնահատվում է մոտ 60 մլն եվրո: Բայց գծային արագացուցչի արժեքը դրա մեջ չի մտնում: Այն կարժենա մոտ 5 մլն եվրո»,-նշեց Ս. Հարությունյանը: Այսօր բնական գիտության ոլորտում տեղաշարժն ու ակտիվությունը նկատելի են: Ս. Հարությունյանը նշեց, որ ոմանք կարծում են, թե դա պայմանավորված է իր ֆիզիկոս լինելու փաստով. ողջ ուշադրությունը սեւեռում է այս ուղղության վրա: Բայց իրականում, ինչպես նա փաստեց, հումանիտար ոլորտն այսօր պասիվ է: Եվ դա միայն տեղական խնդիր չէ: «Այդտեղ քաղաքականություն կա: ԽՍՀՄ-ից որոշ ավանդույթներ ենք ժառանգել: Այն ժամանակ այդ ուղղությունը գաղափարայնացված է եղել: Այդ գիտությունների առաջ չհիմնավորված խոչընդոտներ էին դրվում: Պետք է այնպես անենք, որ հումանիտար գիտությունները ոտքի կանգնեն»,-կարծում է կոմիտեի ղեկավարը: Բացի այդ՝ աշխատանքներ են տարվում երիտասարդ գիտնականներին Հայաստանում պահելու համար: Հարությունյանը կարծում է, որ արտասահման գնալն իրականում վատ բան չէ, միայն թե այնտեղից պետք է վերադառնան ու Հայաստանում աշխատեն: Դրան միտված հայաստանյան գիտության ոլորտում երիտասարդացման եւ դրամաշնորհային

ծրագրեր

են

իրականացվում:

«Ամեն ինչ պետք է նպաստի նրան, որ երիտասարդները մնան եւ աշխատեն Հայաստանում: Իրականացվող միջոցառումները բավական չեն, բայց բյուջեի ընդլայնումով նպատակին կհասնենք», –վստահեցրեց

ԿԳՆ

ԳՊԿ

նախագահը:

2012 թվականին Հայաստանի պետական բյուջեից գիտությանն ուղղվող միջոցները այս տարվա համեմատ կավելանան 7 տոկոսով՝ կկազմեն 10,3 մլրդ դրամ: Դրանք հիմնականում կուղղվեն ոլորտի աշխատողների աշխատավարձերի բարձրացմանը եւ միջազգային համագործակցության խթանմանը: Գումարներ կներդրվեն նաեւ ինովացիոն բնույթի ծրագրեր

Ֆինանսավորելու

համար:

Ս. Հարությունյանի խոսքով՝ պետությունն այսօր ֆինանսավորում է գիտության զարգացման 70—75 տոկոսը՝ նախորդ տարվա 85 տոկոսի դիմաց, իսկ մյուս մասը կազմում են մասնավոր ներդրումները. «Որքան պետությունը շատ է մասնակցում գիտության զարգացմանը, այնքան պետության զարգացման տեմպերը դանդաղում են: Օրինակ՝ Ֆինլանդիայում կառավարությունը գիտության զարգացման 7 տոկոսն է ֆինանսավորում, հիմնական մասը ֆինանսավորվում է մասնավորների կողմից: Հայաստանում 3—4 տարի առաջ պետական ֆինանսավորման մասնաբաժինը շատ ավելի մեծ էր՝ 80—85 տոկոս, եւ, հուրախություն բոլորի, տարեցտարի այն նվազում է: Դա լավ նշան է»:


Թամարա ՄՈՒՐԱԴՅԱՆ

Դեպի «մասնավորեցում»

«Սկսվել է «Քենդլ» նախագծի իրականացման առաջին փուլը, որով նախատեսվում է AREAL լազերային բարձր հաճախային գիտահետազոտական գծային արագացուցիչի կառուցում», - երեկ հրավիրված ասուլիսում այդ մասին հայտարարել է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը՝ ավելացնելով, որ այդ աշխատանքների շրջանակներում հուշագրեր են ստորագրվել Գերմանիայի «ԴԵՋԻ» էլեկտրոնային սինքրոտրոն կենտրոնի եւ Շվեյցարիայի Պատվ Շերերի ինստիտուտի հետ եւ իրականացվելու է մասնագետների համագործակցություն, սարքավորումների տրամադրում: Մասնավորապես, «ԴԵՋԻ» կենտրոնը հայկական կենտրոնին է տրամադրել 3 մլն եվրոյի սարքավորում, եւ սկսվել է գծային արագացուցիչի շինարարությունը: Հարությունյանը տեղեկացրել է, որ արագացուցիչի շինարարությունն արժե 5 մլն եվրո, եւ նախատեսվում է այն ավարտին հասցնել 2013 թ. գարնանը: Արագացուցիչի օդակի շինարարությունը սկսվելու է 2012 թ. եւ նախատեսվում է ավարտին հասցնել 2016-ին: Այս ծրագիրն էլ ընդհանուր առմամբ կարժենա 60 մլն եվրո: Հիշեցնենք, որ ՀՀ կառավարության 2008 թ. դեկտեմբերի 4-ի N1478-Ն որոշմամբ «Քենդլ» սինքրոտրոնային լույսի աղբյուրի նախագծի հիման վրա ստեղծվող միջազգային կենտրոնին տրվել է գիտության եւ առաջատար տեխնոլոգիաների բնագավառում ռազմավարական ազգային գերակայության կարգավիճակ: Սամվել Հարությունյանը երեկ անդրադարձել է նաեւ գիտության ոլորտի ֆինանսավորմանը՝ նշելով, որ 2012 թ. գիտության բյուջեն կավելանա 7 տոկոսով եւ կկազմի մոտ 10,3 մլրդ դրամ՝ 2011-ի՝ 9,4 մլրդ-ի դիմաց:

Նա նշել է, որ բյուջեի ավելացման գումարների հաշվին մոտ 7 տոկոսով կավելանան աշխատավարձերը, ինչպես նաեւ՝ հավելյալ գումարներ կուղղվեն միջազգային ծրագրերի խթանմանը: Նա անդրադարձել է նաեւ գիտության ոլորտում մասնավոր բիզնեսի հետ աշխատանքի խնդրին: «Մինչ այսօր գիտության ոլորտը ֆինանսավորվել է պետության կողմից: Այս տարի առաջին անգամ մենք անցկացրեցինք մրցույթ, որին մասնակցեց նաեւ մասնավոր հատվածը: Մրցույթին մասնակցել են 43 ինովացիոն ծրագրեր, որոնց մեծ մասը համաֆինանսավորում ունենին մասնավոր հատվածից, ընդ որում՝ ոչ միայն հայկական մասնավոր հատվածից, այլ նաեւ՝ արտասահմանյան: Եվ այդ ծրագրերից 17-ը ֆինանսավորվեց», - ասել է Հարությունյանը: Ըստ նրա, զարգացած երկրներում պետության կողմից գիտության ոլորտի ֆինանսավորման ծավալը շատ փոքր տոկոս է կազմում: «Որքան մեծ է պետական ֆինանսավորման մասնաբաժինը գիտության ոլորտում, այնքան պետության զարգացման մակարդակը ցածր է», - նշել է նա՝ տեղեկացնելով, որ ներկայումս գիտության բյուջեի 70-75 տոկոսը պետական միջոցներն են, իսկ մնացածը ստացվում է գրանտային ծրագրերի եւ միջազգային համագործակցության միջոցով: Ըստ Հարությունյանի՝ մի քանի տարի առաջ պետական ֆինանսավորման մասնաբաժինն ավելի մեծ էր, եւ, ի ուրախություն բոլորի, տարեցտարի այն նվազում է:

Հայաստանում սկսվել է արագացուցիչ շինարարությունը




Հայաստանում, «Քենդլ» ծրագրի շրջանակներում, սկսվել է AREAL լազերային բարձր հաճախականության գծային արագացուցիչի շինարարությունը: Նման հայտարարությամբ այսօր՝ հոկտեմբերի 24-ին, հանդես եկավ ՀՀ Կրթության եւ գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը: Ամենայն հավանականությամբ արագացուցիչ կառուցումը կավարտվի 2013 թ. գարնանը:

Նշենք, որ «ՔԵՆԴԼ»-ը (CANDLE-Center for the Advancement of Natural Discoveries using Light Emission) թարգմանաբար նշանակում է՝ սինքրոտրոնային ճառագայթման օգտագործմամբ գիտական հետազոտությունների կենտրոն: Գիտնականները նման կենտրոնում հնարավորություն կունենան ինտենսիվ լուսային հոսքի օգնությամբ հետազոտել մոլեկուլներ, կենսաբանական օբյեկտներ եւ նյութեր:

Շրջակա միջավայրի համար լրիվ անվտանգ արագացուցչային կենտրոնը աննախադեպ կլինի հետխորհրդային, Արեւելյան Եվրոպայի եւ Մերձավոր Արեւելքի տարածաշրջաններում:

Ըստ Ս. Հարությունյանի՝ հայկական արագացուցիչը կառուցվում է Գերմանիայի «Դեզի» կենտրոնի (DESY-գերմանական էլեկտրոնային սինքրոտոն) հետ համագործակցությամբ, եւ ըստ էության հանդիսանում է «Դեզի» արագացուցիչ կրկնօրինակը:

Գիտության 2012 թ. բյուջեն 7 տոկոսով ավելացվել է



2012 թ. գիտության բյուջեն կավելանա 7 տոկոսով եւ կկազմի մոտ 10,3 մլրդ դրամ՝ 2011 թ.՝ 9,4 մլրդ-ի համեմատ: Այդ մասին այսօր՝ հոկտեմբերի 24-ին լրագրողների հետ հանդիպման ժամանակ հայտարարեց ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը:

Հավելյալ ֆինանսավորման հաշվին մոտ 7 տոկոսով կավելանան գիտնականների աշխատավարձերը, կխթանվեն միջազգային ծրագրերը: Վերջին հանգամանքը Ս. Հարությունյանը բացատրեց նրանով, որ միջազգային համագործակցության ոլորտում ծախսված յուրաքանչյուր 1 դոլարի դիմաց ստացվում է 3 դոլար հատույց:

Ս. Հարությունյանը նշեց նաեւ, որ գիտության ֆինանսավորման ոլորտում պետք է մեծանա մասնավորի տեսակարար կշիռը: Եթե զարգացած երկրներում գիտության ֆինանսավորման առնվազն 75 տոկոսն իրականացվում է մասնավորի կողմից, ապա Հայաստանում ճիշտ հակառակն է՝ ֆինանսավորման 70-75 տոկոսն իրականացնում է պետությունը, թեև պետության մասնաբաժինն աստիճանաբար նվազում է: Ս. Հարությունյանն ասաց, որ Ֆինլանդիայի նման գիտատար երկրում գիտության ֆինանսավորման ընդամենը 8 տոկոսն է կատարվում պետության կողմից:

Հայաստանում առաջին անգամ 2011 թ. անցկացվեց մրցույթ, որին մասնակցեց նաեւ մասնավոր հատվածը: Մրցույթին մասնակցել են 43 ինովացիոն ծրագրեր, որոնց մեծ մասը համաֆինանսավորում ունեին մասնավոր հատվածից, այդ թվում՝ ԱՄՆ-ից, Ռուսաստանից, Եվրոպայից:

«Որքան մեծ է պետական ֆինանսավորման մասնաբաժինը գիտության ոլորտում, այնքան պետության զարգացման մակարդակը ցածր է», - ասաց Ս. Հարությունյանը:

Գիտության անմխիթար վիճակը «մխիթարողի» աչքերով



Հայաստանում գիտության ոլորտն ակնհայտ անմխիթար վիճակում է, քանի որ վատ վիճակում են գիտությամբ զբաղվողները: Մեր կառավարությունը մշտապես էլ հնարավորինս շրջանցում է գիտաշխատողներին՝ ուշադրությունը սևեռելով սոցիալական և տնտեսական ոլորտներում առկա խնդիրների լուծմանը, որոնք նույնպես, ի վերջո, չեն կարգավորվում:

Եվ այս պարագայում հասարակության աչքերին «թոզ փչելու» և նրան խորապես համոզելու, որ Հայաստանում գիտությունը եթե ոչ փայլուն, ապա գոնե լավ վիճակում է, պարզապես ծիծաղելի է: Բայց այսօր լրագրողների հետ հանդիպմանը գիտության «անթերի» վիճակի և գիտության երիտասարդացման վերաբերյալ իր դիտարկումները ներկայացրեց ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը:

Վերջինս հայտարարեց, որ իրենք լուրջ են վերաբերվում գիտության երիտասարդացման ծրագրին և այն իրականացնելու ճանապարհին են: Նա, մասնավորապես, նշեց, որ Հայաստանում իրականացվող բոլոր մրցութային ծրագրերում գոնե մեկ մինչև 30 տարեկան երիտասարդ գիտնականի(գիտաշխատող, ասպիրանտ, հայցվոր) ներգրավվածությունը պարտադիր պայման է: Մ.Հարությունյանի խոսքով՝ կան նաև երիտասարդների համար նախատեսված գիտական մրցութային հատուկ ծրագրեր, ըստ որոնց՝ հայտարարված մրցութին կարող է մասնակցել միայն մինչև 35 տարեկան 3-4 երիտասարդ: Հայաստանում այդ ծրագրերի վրա, ըստ նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահի, տարեկան ծախսվում է շուրջ 100 մլն դրամ: Նա նաև տեղեկացրեց, որ նախարարությունն իրականացնում է ասպիրանտների աջակցության ծրագիր, և մրցութի համաձայն, տարվա կտրվածքով ասպիրանտներին տրվում է 1.5 մլն դրամ, որը նրանք օգտագործում են իրենց ասպիրանտական թեզերն ամփոփելու և միջազգային գիտաժողովներին մասնակցելու համար:

Մ.Հարությունյանը վստահեցրեց, որ երիտասարդական գիտական ծրագրերում հաջորդ տարվանից իր մասնակցությունն է ունենում նաև մասնավոր հատվածը՝ ինչպես Հայաստանի, այնպես էլ Սփյուռքի հայ գործարարները: Նա հիշեցրեց նաև ՀՀ նախագահ Մերժ Սարգսյանի բարձր հովանու ներքո իրականացվող երիտասարդ գիտաշխատողներին բնակարաններ տրամադրելու ծրագրի մասին: «Այս բոլոր ծրագրերը պետք է նպաստեն, որ մեր երիտասարդ գիտնականներն ապրեն ու աշխատեն Հայաստանում», - ասաց Սամվել Հարությունյանը՝ անկեղծանալով, որ, իհարկե, այս ծրագրերն և նրանց իրականացման համար ծախսվող ֆինանսական միջոցներն առայժմ բավարար չեն Հայաստանում գիտության զարգացման խնդիրներն արմատապես լուծելու համար:

Անդրադառնալով հայ երիտասարդ գիտնականների արտահոսքին՝ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահը ցավով նշեց, որ արտասահմանյան այցերի ընթացքում երիտասարդներից շատերն այլևս չեն վերադառնում Հայաստան, և այս ծրագրերը, նրա կարծիքով, պետք է վստահություն առաջացնեն նրանց շրջանում և ավելի կապեն հայրենիքին:

Հավելենք, որ նվազ աշխատավարձերի և որ ավելի ցավոտ է՝ աշխատատեղերի բացակայության պատճառով են մեր երիտասարդ գիտնականները հեռանում Հայաստանից և իրենց ապագան փնտրում այլ երկրներում, որտեղ նրանք և՛ ավելի գնահատված են, և՛ ավելի ապահովված: Նշենք, որ, ըստ Ս.Հարությունյանի, Հայաստանում գիտությամբ զբաղվող ասպիրանտի աշխատավարձը 100 հազար դրամ է: Իսկ մի՞թե դա լավ է, եթե ասպիրանտն աշխատանք չունի և ստիպված է ապրել միայն «չոր 100 հազարով»: Ապա ինչո՞ւ չհեռանա: Իսկ մեր հարգարժան բանախոսն այսպես է համոզում. «Գիտեք՝ հե՞շտ է դրսում ապրելը, երբ դու օտար ես, ունես էմիգրանտի հոգեբանություն, քեզ նայում են որպես երկրորդ սորտի մարդ, թեկուզ դու բարձրակարգ գիտնական ես, իսկ հայրենիքում ապրելը՝ 300-400 դոլարով, շատերի համար ավելի գայթակղիչ է, քան 3000-4000 դոլարով՝ արտասահմանում»:

Ս.Հարությունյանը հավաստիացրեց, որ հայ երիտասարդ գիտնականների մոտ չի գործում «կեցությունն է որոշում գիտակցությունը» փիլիսոփայությունը, քանի որ նրանց աշխատավարձից բացի շատ է ոգևորում պետության հովանավորությունն ու ուշադրությունն իրենց նկատմամբ և լուրջ գիտական աշխատանքների ղեկավարումն իրենց վստահելու պատիվը:

Այս առիթով նա նշեց, որ այսօր Հայաստանում կան գիտական ծրագրերի երիտասարդ ղեկավարների(30 տոկոսը մինչև 35 տարեկան) մի հզոր բանակ՝ 50-60 հոգի, ովքեր, ըստ Ս.Հարությունյանի, կմնան, կաշխատեն մեր երկրում և կլինեն մեր գիտության լիդերները:

Նշենք, որ 2012-ի պետբյուջեով գիտությանը հատկացվող միջոցները կավելանան 7 տոկոսով՝ կազմելով 10.3 մլրդ դրամ՝ այս տարվա 9.4 մլրդ դրամի փոխարեն: Սամվել Հարությունյանը նշեց, որ գումարի մի մասը կծախսվի աշխատավարձերի բարձրացման(նախատեսված է 7 տոկոս աճ), իսկ մյուս մասը՝ միջազգային ծրագրերի խթանման վրա:

Ինչևէ, ինչքան էլ լուսավոր ու պայծառ է մեր գիտության վիճակը կրթության և գիտության նախարարության պաշտոնյայի աչքերով, միննույն է՝ իրականությունն այլ բան է պատկերում: Մի հանգամանք ևս. այսօր գիտական ոլորտում իրականացվող մրցույթները թափանցիկ, հասանելի և հրապարակային անվանել չի կարելի: Պարզ չէ, ի վերջո, ինչ աշխատանքներ են ներկայացվում տեղի կամ միջազգային մրցույթներում և որոնք են դրանցից դառնում հաղթողներ: Ո՞ւմ է պետությունն առավելություն տալիս, իսկ ովքե՞ր են, որ մշտապես մնում են ստվերում: Ի՞նչ լուրջ արդյունքներ են մինչ այսօր տվել այն միջազգային գրանտները, որոնք շահել են մեր գիտնականները՝ ոգևորել է իսկապես դա նրանց, թե՞ ... Առայժմ ուղեղների արտահոսքը շարունակվում է, և մեծ թափով:

Հայաստանում կառուցվող գծային արագացուցիչը կշահագործվի 2013-ի գարնանը

ՀՀ կառավարության 2008թ. դեկտեմբերի 4-ի որոշմամբ՝ «Քենդլ» սինքրոտրոնային միջազգային կենտրոնին տրվել է գիտության և առաջատար տեխնոլոգիաների բնագավառում ռազամավարական ազգային գերակայության կարգավիճակ: Գործադիրը հանձնարարել է գիտության պետական կոմիտեին բանակցություններ իրականացնել մի շարք երկրների հետ և համագործակցության հուշագրեր ստորագրել «Քենդլ» նախագծի հետ աշխատելու համար: Այս մասին այսօր լրագրողներին տեղեկացրեց ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը:

Նրա խոսքով՝ այդ ուղղությամբ 2011թ. մի շարք համաձայնագրեր են ստորագրվել: Մասնավորապես, «Քենդլ» նախագծի իրականացման առաջին փուլում Գերմանիայի «Դեզի» կենտրոնի հետ ստորագրվել է պայմանագիր՝ կենտրոնի կողմից անհատույց տրված սարքավորումների հիման վրա Հայաստանում Areal լազերային բարձր հաճախականային գիտահետազոտական գծային արագացուցիչ կառուցելու համար: Պայմանագիր է կնքվել նաև Շվեյցարիայի Պաուլ Շերերի ինստիտուտի(PSI) ներկայացուցիչների հետ, ովքեր հաստատել են իրենց մասնակցությունը «Քենդլ» նախագծի իրականացմանը: Մ.Հարությունյանի հավաստմամբ՝ թե՛ գերմանական, և թե՛ շվեյցարական կողմերի հետ ձեռքբերված պայմանավորվածությունների համաձայն՝ առաջիկա 2-3 տարիներին կկազմակերպվի երիտասարդ մասնագետների վերապատրաստման ծրագրեր այդ կենտրոններում, հայ և գերմանացի, հայ և շվեյցարացի գիտնականների հանդիպումներ: 2012թ. գարնանը, ինչպես տեղեկացրեց նա, նախատեսվում է Հայաստանում կազմակերպել հանդիպում Գերմանիայի և Շվեյցարիայի ներկայացուցիչների հետ:

Մ.Հարությունյանը նշեց, որ գծային արագացուցչի կառուցման համար Հայաստանը գերմանական և շվեյցարական կողմից ստացել է 3 մլն եվրոյի սարքավորում, և արդեն սկսվել է Areal գծային արագացուցչի կառուցման աշխատանքները, որը կիրականացվի «Քենդլ» ինստիտուտին հարող տարածքում: Նա հայտնեց, որ գծային արագացուցիչը կշահագործվի 2013թ. գարնանը, իսկ ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 60 մլն եվրո: Մ.Հարությունյանն ասաց, որ կառավարությունը նույնպես որոշակի գումար է հատկացնելու արագացուցչի շինարարության համար:

Նրա հավաստմամբ՝ Հայաստանում կառուցվող արագացուցիչը երրորդ սերնդի «Դեզի» գծային արագացուցչի կրկնօրինակն է, որը պետք է լինի ոչ միայն սինքրոտրոնային սարքավորում, այլև առանձին սարքավորում, որի վրա հնարավորություն կլինի առանձին հետազոտություններ կատարել: «Արագացուցչի կառուցումից հետո գիտության մեջ կարձանագրվեն թռիչքային հաջողություններ՝ հատկապես բնական գիտությունների ոլորտում», - ասաց Սամվել Հարությունյանը:

Գիտության պետական կոմիտեի նախագահը վստահեցրեց, որ արագացուցչի նկատմամբ հետաքրքրություններ են նկատվում մի շարք երկրների կողմից՝ մասնավորապես անգլիական «Դայմոնդ» արագացուցչային կենտրոնի, և ապագայում համաձայնագիր կստորագրվի նաև այդ կենտրոնի հետ:

Հայաստանը, Վրաստանը եւ Ադրբեջանը համատեղ հնէաբանական ծրագիր են իրականացնում



Photo: Photolure
Սամվել Հարությունյանը

Երեւան: Մեդիամաքս: Հնէաբանական պեղումներ ներառող՝ Հայաստանի, Վրաստանի եւ Ադրբեջանի համատեղ ծրագիրը կտեւի երկու տարի:

Ինչպէս հաղորդում է Մեդիամաքս-ը, ներկայացնելով ծրագիրը, ՀՀ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանն ասել է, որ այն արդեն 6 ամիս ընթացքի մեջ է:

“Այս ծրագրի շրջանակներում ինֆորմացիայի փոխանակումը տեղի է ունենում համացանցի միջոցով”, - ասել է նա:

Սամվել Հարությունյանը հավելել է, որ Հայաստանի կողմից ծրագիրը համակարգում է ՀՀ ԳԱԱ Հնէաբանության ինստիտուտը, իսկ ֆինանսավորումը իրականացնում է Ֆրանսիայի Գիտական հետազոտությունների ազգային ինստիտուտը (CNRS):

2012-ին գիտության ֆինանսավորումը Հայաստանում կավելանա 7%-ով



Photo: PanArmenian Photo

ՀՀ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը

Երևան: Մեդիամաքս: 2012 թ-ին գիտության ֆինանսավորումը պետության կողմից Հայաստանում կավելանա 7%-ով եւ կկազմի 10,3 մլրդ դրամ:

Ինչպես հաղորդում է Մեդիամաքս-ը, այսօր այս մասին ասել է ՀՀ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը:

Նրա խոսքերով, 2012թ. այս ոլորտում նախատեսվում է աշխատավարձերի բարձրացում մոտ 7%-ով:

Սամվել Հարությունյանը նշել է, որ պետության կողմից հատկացված գումարի մի մասը կուղղվի ինովացիոն ծրագրերի խթանմանը:

Բացի այդ, որոշ գումար կհատկացվի նաև միջազգային ծրագրերի իրականացմանը: Խոսելով միջազգային համագործակցության մասին՝ Սամվել Հարությունյանն ասել է, որ Գերմանիան Հայաստանին է տրամադրել 3 մլն եվրոյի սարքավորումներ, իսկ “ՔԵՆԴԼ” նախագծի շրջանակներում Հայաստանի եւ Իտալիայի Elettra սինքրոտրոնային կենտրոնի միջեւ ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր:

Գիտության ոլորտի երիտասարդացման վրա ամեն տարի ծախսվում է մոտ 100 միլիոն դրամ



«Գիտության ոլորտում երիտասարդացման ծրագիրն անպայման պետք է իրականացվի, և մենք արդեն իրականացնում ենք: Մասնավորապես ՀՀ-ում իրականացվող բոլոր գրանտային ծրագրերում պարտադիր պայմաններից մեկն այն է, որ ծրագրում պետք է ընդգրկված լինի մինչև 30 տարեկան գիտաշխատող», - այսօր լրագրողների հետ հանդիպմանն ասաց ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը:

Նրա խոսքով՝ կան նաև շատ ծրագրեր՝ նախատեսված մինչև 30 տարեկան երիտասարդների համար, օրինակ՝ ասպիրանտների աջակցման ծրագիր, որին միացել է նաև մասնավոր հատվածը՝ «Ֆլեշ» ընկերությունը՝ «Բարեպաշտ սերունդ» հիմնադրամի միջոցով: Երիտասարդացման ծրագրերի հանդեպ մեծ հետաքրքրություն են ցուցաբերում նաև միջազգային մի շարք հայկական կառույցներ, մասնավորապես ԱՄՆ «Հայ ճարտարագետների միություն»-ը: ՀՀ նախագահի բարձր հովանու ներքո իրականացվում է երիտասարդ գիտաշխատողների համար բնակարանային շինարարության ծրագիր:

«Իհարկե մեր իրականացրած միջոցառումները դեռ բավարար չեն, որ արմատապես լուծվի գիտության մեջ երիտասարդների ներգրավվածության հարցը, բայց կամաց-կամաց բյուջեի մեծացմանը զուգընթաց այս ծրագրերն ավելի լուրջ բնույթ են կրելու», - ասաց Սամվել Հարությունյանը՝ հավելելով, որ ամեն տարի գիտության ոլորտի երիտասարդացման վրա ծախսվում է մոտ 100 միլիոն դրամ:

Ըստ Սամվել Հարությունյանի՝ այն փիլիսոփայական կատեգորիան, որ կեցությունն է պայմանավորում գիտակցությունը, որոշ դեպքերում այդքան էլ չի աշխատում, քանի որ երբ երիտասարդը տեսնում է, որ իր թիկունքին կանգնած է պետությունը և իր հետ հաշվի է նստում՝ վստահելով գիտական թեմաներ և ծրագրեր, դա շատ հաճախ ավելի մեծ արդյունք է տալիս, քան շատ մեծ աշխատավարձը: Ներկայումս գիտական գրանտային ծրագրերի մոտ 35 տոկոսը ղեկավարում են մինչև 30 տարեկան 50-60 երիտասարդներ:

«Համոզված եմ, որ նրանց զգալի մասը կմնա ու կաշխատի Հայաստանում՝ դառնալով գիտության լիդեր: Չկարծեք, թե այդքան հեշտ է դրսում ապրելը, երբ դու օտար ես և ունես էմիգրանտի հոգեբանություն», - ասաց Սամվել Հարությունյանը՝ հավելելով, որ իրենց ստացած 150. 000 դրամը մեծ գումար չէ, բայց ավելի ոգևորում է այն, որ իրենց լուրջ գիտական ծրագրեր են վստահում:

Հայաստանում արագացուցիչ կառուցմամբ թռիչքային զարգացում կապրեն բնական գիտությունները. Սամվել Հարությունյան



«Հայաստանը մասնակցում է միջազգային մի շարք գիտահետազոտական ծրագրերի, որոնց նախաձեռնողը հենց Հայաստանն է եղել: Դրանցից ամենակարևորը «Քենդլ» ծրագիրն է, որը ՀՀ կառավարության որոշմամբ գիտության և առաջատար տեխնոլոգիաների բնագավառում ստացել է ռազմավարական գերակայության կարգավիճակ», - այսօր լրագրողների հետ հանդիպմանն ասաց ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը:

Նրա խոսքով՝ կարևոր համաձայնագրեր ստորագրելու առումով 2011թ-ը կարելի է բեղումնավոր համարել: Մոտ քսան միջազգային համաձայնագրեր են ստորագրվել ՌԴ, Ֆրանսիայի, Բելառուսի, Գերմանիայի, Իտալիայի հետ, շուտով կստորագրվեն համաձայնագրեր Շվեյցարիայի և Ուկրաինայի հետ: Ըստ Սամվել Հարությունյանի՝ ամենաառանցքային ձեռքբերումը գծային արագացուցիչ կառուցման շուրջ համաձայնությունն է՝ զուգորդված մասնագետների վերապատրաստումներով: Ստացվել են 3 միլիոն եվրոյի սարքավորումներ Գերմանիայից, սկսվել է գծային արագացուցիչ շինարարությունը, որը կավարտվի 2013-ին, և արագացուցիչ օդակի շինարարությունը, որը կավարտվի 2016-ին: Ծրագրի ընդհանուր արժեքն է 60 միլիոն եվրո: Կառավարությունը նույնպես տրամադրել է ֆինանսական միջոցներ գծային արագացուցիչ շինարարության համար: Հայաստանում կառուցվելիքը լինելու է երրորդ սերնդի արագացուցիչ:

«Ես հույս ունեմ, որ այս արագացուցիչ կառուցումից հետո մենք թռիչքային զարգացում կունենանք, հատկապես բնական գիտությունների զարգացման ոլորտում», - ասաց Սամվել Հարությունյանը:

Նա նշեց նաև, որ Ֆրանսիայի Ազգային հետազոտությունների կենտրոնի հետ համատեղ երկու մրցույթ է անցկացվել, որոնց արդյունքում ստեղծվել են հայ-ֆրանսիական գիտական լաբորատորիաներ, իրականացվում է ռեգիոնալ ծրագիր՝ ներառելով Հայաստանը, Ադրբեջանն ու Վրաստանը, որի շրջանակում կիրականացվի համատեղ թեզերի պաշտպանություն:

AREAL գծային արագացուցիչը պատրաստ կլինի 2013-ի գարնանը

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանն այսօր լրագրողների հետ հանդիպման ժամանակ տեղեկացրեց, որ սկսվել է «Քենդլ» նախագծի իրականացման առաջին փուլը, որով նախատեսվում է AREAL լազերային բարձր հաճախականային գիտահետազոտական գծային արագացուցիչի կառուցում:
Հարությունյանը նշեց, որ հուշագրեր են ստորագրվել Գերմանիայի «ԴԵՋԻ» էլեկտրոնային սինքրոտրոն կենտրոնի և Շվեյցարիայի Պաուլ Շերերի ինստիտուտի հետ և իրականացվելու է մասնագետների համագործակցություն, սարքավորումների տրամադրում:

Մասնավորապես, ԴԵՋԻ կենտրոնը հայկական կենտրոնին է տրամադրել 3 մլն եվրոյի սարքավորում, և սկսվել է գծային արագացուցիչի շինարարությունը:

Հարությունյանը տեղեկացրեց, որ արագացուցիչի շինարարությունն արժե 5 մլն եվրո, և նախատեսվում է այն ավարտին հասցնել 2013 թ. գարնանը: Արագացուցիչի օղակի շինարարությունը սկսվելու է 2012 թ. և նախատեսվում է ավարտին հասցնել 2016-ին: Այս ծրագիրն էլ ընդհանուր առմամբ կարժենա 60 մլն եվրո:

Հիշեցնենք, որ ՀՀ կառավարության 2008 թ. դեկտեմբերի 4-ի N1478-Ն որոշմամբ «Քենդլ» սինքրոտրոնային լույսի աղբյուրի նախագծի հիման վրա ստեղծվող միջազգային կենտրոնին տրվել է գիտության և առաջատար տեխնոլոգիաների բնագավառում ռազմավարական ազգային գերակայության կարգավիճակ:

Սամվել Հարությունյանը նաև շեշտեց, որ 2011-ը միջազգային համագործակցության տեսանկյունից բավական բեղմնավոր է եղել գիտության բնագավառի համար:

Գիտության ոլորտի բյուջեն 2012-ին 7 տոկոսով կավելանա

2012 թ. գիտության բյուջեն կավելանա 7 տոկոսով և կկազմի մոտ 10,3 մլրդ դրամ՝ 2011-ի՝ 9,4 մլրդ-ի դիմաց: Այս մասին այսօր լրագրողներին տեղեկացրեց ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը:

Նա նշեց, որ բյուջեի ավելացման գումարների հաշվին մոտ 7 տոկոսով կավելանան աշխատավարձերը, ինչպես նաև հավելյալ գումարներ կուղղվեն միջազգային ծրագրերի խթանմանը:

Հարությունյանը տեղեկացրեց, որ գիտության ոլորտում խիստ կարևոր է մասնավոր բիզնեսի հետ աշխատանքը. «Մինչ այսօր գիտության ոլորտը ֆինանսավորվել է պետության կողմից: Այս տարի առաջին անգամ մենք անցկացրեցինք մրցույթ, որին մասնակցեց նաև մասնավոր հատվածը: Մրցույթին մասնակցել են 43 ինովացիոն ծրագրեր, որոնց մեծ մասը համաֆինանսավորում ունենին մասնավոր հատվածից, ընդ որում՝ ոչ միայն հայկական մասնավոր հատվածից, այլ նաև արտասահմանյան: Եվ այդ ծրագրերից 17-ը ֆինանսավորվեց»:

Նրա գնահատմամբ՝ հետագայում պետք է մեծացնել մասնավորի հետ համագործակցությունը, քանզի մասնավորի հետ համագործակցությունը էապես խթանում է գիտության զարգացումը: Ըստ Հարությունյանի՝ զարգացած երկրներում պետության կողմից գիտության ոլորտի ֆինանսավորման ծավալը շատ փոքր տոկոս է կազմում. «Որքան մեծ է պետական ֆինանսավորման մասնաբաժինը գիտության ոլորտում, այնքան պետության զարգացման մակարդակը ցածր է»:

Հարությունյանը նաև հավելեց, որ այսօր գիտության բյուջեի 70-75 տոկոսը պետական միջոցներն են, իսկ մնացածը ստացվում է գրանտային ծրագրերի և միջազգային համագործակցության միջոցով: Ըստ Հարությունյանի՝ մի քանի տարի առաջ պետական ֆինանսավորման մասնաբաժինն ավելի մեծ էր, և ի ուրախություն բոլորի, տարեցտարի այն նվազում է:

Հայաստանն ամեն տարի գիտական ծրագրերի երիտասարդացման համար հատկացնում է 100 մլն դրամ



Հայաստանում իրականացվող բոլոր դրամաշնորհային ծրագրերի պայմաններից է մինչև 35 տարեկան երիտասարդ գիտնականների, ասպիրանտների մասնակցությունը ծրագրերին: «Մենք նմանատիպ ծրագրերի վրա Հայաստանում ամեն տարի ծախսում ենք շուրջ 100 մլն դրամ: Կա ասպիրանտների աջակցության ծրագիր 1,5մլն դրամի, որը պետք է օգտագործվի նրանց թեզի և գիտաժողովների մասնակցության համար: Գիտության բյուջեի աճին զուգընթաց աճելու է նաև նմանատիպ ծրագրերի քանակը», - հայտնեց ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանն այսօր կայացած մամուլի ասուլիսում:

Նրա խոսքով, հայ երիտասարդ գիտնականներով հատկապես հետաքրքրված են միջազգային հայկական գիտական ընկերությունները:

«Իհարկե, լավ է, երբ երիտասարդ գիտնականներն արտերկիր են այցելում: Առանց այցելությունների գիտնական չի լինում, սակայն ավելի լավ է, երբ ետ են վերադառնում», - ավելացրեց Սամվել Հարությունյանը:

Ըստ նրա, Հայաստանի գիտական գրանտային ծրագրերի 35%-ը ղեկավարում են մինչև 30 տարեկան երիտասարդ գիտնականներ՝ մոտ 50-60 հոգի:

Հայաստանի գիտության բյուջեն 2012 թվականին կավելանա 7 տոկոսով



2012-ին Հայաստանում **գիտության բյուջեն** կավելանա 7%-ով և կկազմի մոտ 10,3 տասնորդական միլիարդ դրամ: Այս մասին հայտնեց լրագրողներին ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ **Սամվել Հարությունյանն** այսօր կայացած մամուլի ասուլիսում: «Բյուջեի մի մասը կծախսվի աշխատավարձերի վրա. դրանք կավելանան մոտ 7%-ով, իսկ մյուս մասը՝ միջազգային ծրագրերի ֆինանսավորման վրա և միջազգային համագործակցության վրա: Սրանց համար ծախսված յուրաքանչյուր դոլարը 2 դոլար ետ է բերում», -նշեց նա:

Նրա խոսքով գիտության բյուջեի 70%-ը պետական ֆինանսավորումն է, ինչը լավ չէ, քանի որ արտասահմանում ոլորտին տրամադրվող պետական ֆինանսավորումը 15%-ից չի անցնում: «Իսկ երբ մասնավորն է աջակցում գիտությանը, նշանակում է, որ ոլորտը արագ է զարգանում: Իսկ մեր դեպքում հակառակն է», -ավելացրեց Սամվել Հարությունյանը:

Նա տեղեկացրեց նաև, որ ԱՊՀ երկրների համագործակցության 20-ամյակին նվիրված ժողովածուում հրապարակվել են գիտության ոլորտի զարգացման մակարդակի միջազգային առաջատար գիտատեխնիկական Scopus և Web of Science շտեմարանների վիճակագրական տվյալները:

Համաձայն ժողովածուի, Հայաստանը 1000 գիտական աշխատողի հաշվարկով գիտության ոլորտի զարգացման 2010-թ-ի հղման ինդեքսով առաջինն է ԱՊՀ երկրներում:

«Մա մեծ ձեռքբերում չէ, մենք շատ ավելին կարող են անել: Հայաստանում չկան ցավոք հայագիտության օտարալեզու հրապարակումներ, ինչը մենք նախատեսում ենք շտկել եկող տարվա ընթացքում», -նշեց նա:

Հայաստանում կառուցվող գծային արագացուցիչը շահագործման կհանձնվի 2013-ին



Այսօր ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը մամլո ասուլիսի ժամանակ հայտնեց վերջին մի քանի տարիների ընթացքում Հայաստանի գիտական հաջողությունների մասին:

Ըստ նրա, 2008թ-ից Հայաստանը ստորագրել է շուրջ 20 միջազգային համագործակցության համաձայնագրեր մի շարք երկրների հետ՝ Իտալիայի, Ռուսաստանի, Ֆրանսիայի, Բելառուսի և այլն: «Այս համագործակցությունների շնորհիվ Հայաստանն ունի արդեն լուրջ գիտական փորձ: Մենք անցկացրել են մի շարք գիտական միջազգային և ռեզիդնալ ծրագրեր», -նշեց Սամվել Հարությունյանը:

2008-ի դեկտեմբերի 4-ին ՀՀ կառավարության որոշմամբ «Քենդլ» սինքրոտրոնային լույսի աղբյուրի նախագծի հիման վրա ստեղծվող միջազգային կենտրոնին տրվել է գիտության և առաջատար տեխնոլոգիաների բնագավառում ռազմավարական ազգային գերակայության կարգավիճակ:

Սամվել Հարությունյանը հատկապես առանձնացրեց «Քենդլ» նախագծի շրջանակներում ստորագրված ՀՀ և Իտալիայի ELETTRA սինքրոտրոնային կենտրոնի հետ փոխընթացման հուշագիրը և ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի և «ԴԵՋԻ» կենտրոնի միջև կքնված մտադրությունների հուշագիրը: «Քենդլ»-ի շրջանակներում հայ և գերմանացի գիտնականները փորձի փոխանակում են անելու, մասանկցելու են դասընթացների և գիտաժողովների:

Գերմանիայի «ԴԵՋԻ» սինքրոտրոնային կենտրոնը Հայաստանին տրամադրել է 3մլն եվրոյի սարքավորումներ գիտահետազոտական գծային արագացուցչի կառուցման համար: Այս արագացուցիչը նախատեսվում է շահագործման հանձնել 2013թ-ի գարնանը: Ծրագրի ընդհանուր արժողությունը 60մլն եվրո է, իսկ գծային արագացուցչիչն առանձին 9մլն եվրո:

Բացի գծային արագացուցչից կառուցվելու է նաև օղակ արագացուցիչ, որի կառուցումը կսկսվի 2012-ի կեսերին և կավարտվի 2016-ին:

«Տարածաշրջանային ծրագրի շրջանակներում հնէաբանները անդրկովկասի տարածքում հնագիտական պեղումներ են անցկացրել», -ասաց Սամվել Հարությունյանը:

«Քենդլ» միջազգային ծրագիրն ամենահաջողմածն է համարում գիտապետկոմի նախագահը



Սոնա Հակոբյան

Գիտությունը բաց համակարգ է: Հաշվի առնելով, որ գիտական հետազոտությունների համար կարևորագույն խթանիչ կարող է լինել հատկապես միջազգային համագործակցությունը, գիտության պետական կոմիտեն այսօր շեշտը դնում է միջազգային կապերի վրա:

Կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանի խոսքով՝ 2008 թվականից մինչ օրս արդեն 20 միջազգային համաձայնագրեր ու պայմանագրեր են ստորագրվել աշխարհի մի շարք երկրների հետ:

«Ֆրանսիայի Ազգային հետազոտությունների կենտրոնի հետ համատեղ երկու մրցույթ է անցկացվել, որոնց արդյունքում ստեղծվել են հայ-ֆրանսիական գիտական լաբորատորիաներ, իրականացվում է ռեգիոնալ ծրագիր՝ ներառելով Հայաստանը, Ադրբեջանն ու Վրաստանը, որի շրջանակում կիրականացվի համատեղ թեզերի պաշտպանություն»:

Ոլորտի կարևորագույն ձեռքբերումներից Սամվել Հարությունյանը մասնավորապես առանձնացրեց «Քենդլ» միջազգային ծրագիրը, որի նպատակն է Հայաստանում ստեղծել նոր սերնդի արագացուցիչ: Սարքը հնարավորություն կտա գիտության մի շարք ոլորտներում լուծել բեկումնային խնդիրներ: Հայաստանում կզարգանան գիտության մի շարք խնդիրներ: Կոմիտեի նախագահի տեղեկացմամբ՝ այս ծրագիրը ոչ միայն գիտական, այլև քաղաքական մեծ նշանակություն ունի:


«Ես հույս ունեմ, որ այս արագացուցչի կառուցումից հետո մենք թռիչքային զարգացում կունենանք, հատկապես բնական գիտությունների զարգացման ոլորտում», - ասում է Սամվել Հարությունյանը:

Նշենք, որ վերջերս էլ Մինսկում տեղի է ունեցել Անկախ պետությունների համագործակցության 20-ամյակին նվիրված միջազգային գիտաժողով, որի ընթացքում ներկայացվել են վիճակագրական տվյալներ, ըստ որոնց Հայաստանը որոշակի հաշվարկներում առաջատար դիրքերում է:

Իհարկե կան որոշակի հաջողություններ, բայց կան նաև բացթողումներ, խոստովանեց կոմիտեի նախագահը: Լուրջ խնդիր է «ուղեղների» արտահոսքը: Սոցիալական անապահով պայմաններից ելնելով՝ երիտասարդ գիտնականների մեծամասնությունը նախընտրում է աշխատել արտերկրում:

Սամվել Հարությունյանի տեղեկացմամբ՝ 2012-ին գիտության բյուջեն 7 տոկոսով կավելանա:

AREAL լազերային բարձր հաճախականային գիտահետազոտական գծային արագացուցիչը շահագործման կհանձնվի 2013-ի գարնանը



«Քենդլ» նախագծի շրջանակում մեկնարկել են AREAL լազերային բարձր հաճախականային գիտահետազոտական գծային արագացուցչի կառուցման աշխատանքները, որը նախատեսվում է շահագործման հանձնել 2013 թվականի գարնանը: Այս մասին այսօր հրավիրած ասուլիսում տեղեկացրեց Հայաստանի կրթության եւ գիտության նախարարության Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը՝ ավելացնելով, որ արագացուցչի կառուցման աշխատանքներն ընթանում են գերմանական «Դեզի» ընկերության հետ համագործակցության միջոցով, որը հայկական կողմին անհատույց տրամադրել է 3 մլն եվրո արժողությամբ գերժամանակակից սարքավորումներ: Ս. Հարությունյանի խոսքով՝ «Քենդլ» նախագծի շրջանակում համագործակցության պայմանավորվածություն է ձեռք բերվել նաև Շվեյցարիայի Պաուլ Շերերի անվան ինստիտուտի հետ:

Գերմանական եւ շվեյցարական կողմերի հետ ձեռք բերված պայմանավորվածությունների արդյունքում առաջիկա 2-3 տարիների ընթացքում կկազմակերպվեն երիտասարդ մասնագետների վերապատրաստման ծրագրեր նշված գիտական կենտրոններում:

«Արագացուցչի կառուցումից հետո, համոզված եմ, կունենանք թռիչքային զարգացում գիտության ասպարեզում: Դրան կնպաստեն նաև մի շարք այլ պետությունների՝ Ֆրանսիայի, Ուկրաինայի, Ռուսաստանի, Իտալիայի եւ այլ երկրների գիտահետազոտական կենտրոնների հետ ձեռք բերված համագործակցության պայմանավորվածությունները», - ասաց Ս. Հարությունյանը:

Այս տարի միջազգային համագործակցության արդյունքում համաֆինանսավորման սկզբունքով կազմակերպվել է իրականացվել են գիտական ծրագրերի մրցույթներ՝ հիմնարար հետազոտությունների բելառուսական հանրապետական հիմնադրամի, Ֆրանսիայի գիտական հետազոտությունների ազգային կենտրոնի, ռուսաստանյան հումանիտար գիտությունների հիմնադրամի հետ: Ներկայում ամփոփված են Բելառուսի հետ անցկացված մրցույթի արդյունքները, ինչի արդյունքում ֆինանսավորման են երաշխավորվել 17 համատեղ գիտական ծրագրեր:

Հետագայում նախատեսվում են մրցույթներ Գերմանիայի, Իտալիայի, Շվեյցարիայի հետ, այդ թվում՝ ինովացիոն ծրագրեր ֆինանսավորելու համար:

2012-ին գիտությանն ուղղվող ֆինանսական միջոցները կավելանան 7 տոկոսով



2012 թվականին Հայաստանի պետական բյուջեից գիտությանն ուղղվող միջոցները, այս տարվա համեմատ, կավելանան 7 տոկոսով՝ եւ կկազմեն 10,3 մլրդ դրամ: Ինչպէս այսօր հրավիրված ասուլիսում նշեց Հայաստանի կրթության եւ գիտության նախարարության Գիտության պետական կոմիտէի նախագահ Սամվել Հարությունյանը՝ միջոցները հիմնականում կուղղվեն ոլորտի աշխատողների աշխատավարձերի բարձրացմանը եւ միջազգային համագործակցության խթանմանը: «Գիտության վրա ծախսված յուրաքանչյուր մեկ դոլարը վերադարձնում է երկու դոլար: Գումարներ կներդրվեն նաեւ ինովացիոն բնույթի ծրագրեր

ֆինանսավորելու համար», - նշեց Գիտության պետական կոմիտէի նախագահը:

Ս. Հարությունյանի խոսքով՝ պետությունն այսօր ֆինանսավորում է գիտության զարգացման 70-75 տոկոսը՝ նախորդ տարվա 85 տոկոսի դիմաց, իսկ մյուս մասը կազմում են մասնավոր ներդրումները: «Որքան պետությունը շատ է մասնակցում գիտության զարգացմանը, այնքան պետության զարգացման տեմպերը դանդաղում են: Օրինակ՝ Ֆինլանդիայում կառավարությունը գիտության զարգացման 7 տոկոսն է ֆինանսավորում, հիմնական մասը ֆինանսավորվում է մասնավորների կողմից», - ընդգծեց Ս. Հարությունյանը՝ կարեւորելով մասնավոր ներդրումների ավելացումը գիտության ասպարեզում:

Ըստ նրա՝ գիտության զարգացման նպատակով իրականացվում են նաեւ դրամաշնորհային ծրագրեր: Գիտական ծրագրերի 35 տոկոսը ղեկավարում են մինչեւ 35 տարեկան երիտասարդ գիտնականները, որոնց թիվը, Ս. Հարությունյանի խոսքով, բավականին շատ է եւ որոնց հետ գիտական ասպարեզում մեծ հույսեր են կապվում:

Бюджетное финансирование науки в Армении вырастет в 2012 году на 7% и составит 10,3 млрд. Драмов



Бюджетное финансирование науки в Армении вырастет в 2012 году на 7% и составит 10,3 млрд. драмов, сказал в понедельник журналистам председатель Государственного комитета по науке Министерства науки и образования Армении Самвел Арутюнян.

«Увеличение финансирования в первую очередь скажется на повышении зарплат сотрудников научной сферы, а остальные ресурсы будут направлены на расширение международного сотрудничества и инновационные программы», - сказал Арутюнян.

При этом он отметил, что если ранее основное финансирование сферы осуществлялось со стороны государства, то сейчас идет тенденция к сокращению госдоли до 75%, что свидетельствует о развитии науки и привлечении дополнительных ресурсов частного сектора и в виде грантов от международных структур.

По словам Арутюняна, Армения постепенно переходит к партнерским программам, в том числе по совместным конкурсам среди ученых в сфере естественных и гуманитарных наук.

В то же время Арутюнян придал особую важность привлечению молодых ученых в науку, для чего, по его словам, осуществляются различные программы, в том числе финансирования грантовых проектов с участием молодых ученых, вовлечение их в программы поддержки. (\$1 – 377,98 драма).